

## **ՀՀ Ֆինանսների նախարարություն**

### **Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ 36/3**

**15 սեպտեմբերի 2015 թ.**

Քննարկվեց Ա/Ձ Հասմիկ Թադևոսյանի 03.08.2015 թ-ի դիմում-գանգատը ՀՀ ՖՆ Արաբկիրի ՀՏ 19.06.2015 թ-ի թիվ 6108178 ակտի դեմ:

#### **Ա/Ձ Հասմիկ Թադևոսյանի գանգատում բերված փաստարկները.**

Հսկիչ գնումների վերաբերյալ 19.06.15թ.-ին կազմված թիվ 6108178 ստուգման ակտը չի համապատասխանում իրականությանը: Ակտում նշված օրը 21.05.2015թ.-ին և ընդհանրապես Ա/Ձ Հասմիկ Թադևոսյանին պատկանող ք.Երևան, Երիտասարդական մետրո կայարան նախ. հասցեում գտնվող խանութից կատարված ցանկացած գնումների դեպքում գումարը մուտքագրվում է ՀԴՄ և համապատասխան գումարի չափով կտրոն է տրամադրվում: Ակտի նախագծում նշվել է, որ 21.05.2015թ-ին ժամը 17:23-ին հարկային տեսուչի կողմից ՀԴՄ-ից դուրս բերված «Z» հաշվետվությունը կազմում է 100 (հարյուր) դրամ ընդհանուր գումարով, փորձելով թյուրիմացության մեջ գցել հարկատուին և համոզել, որ կտրոններ չեն տրամադրվել գնորդներին, որը չի համապատասխանում իրականությանը, քանի որ ցանկացած գնման դեպքում տրամադրվում է համապատասխան գումարի կտրոն: Այնուհետև, ակտի նախագիծը բողոքարկելուց հետո, փորձելով արդարացնել իրենց անհիմն գործողությունները կազմվել է ակտ, որում նշվել է, որ ՀԴՄ-ից դուրս բերված իրական «Z» հաշվետվության գումարը 10.900 (տասը հազար իննը հարյուր) դրամ է, պատճառաբանելով, թե իբրև տեղի է ունեցել համակարգչի տեխնիկական անսարքություն, որի հետևանքով տպագրվել է 100 (հարյուր) դրամ: Սակայն պարզ է, որ դա որևէ համակարգչային տեխնիկական անսարքության պատճառ չի կարող հանդիսանալ, քանի որ վերը նշված 100 դրամը ակտի նախագծում հիշատակվում է երկու անգամ, որի ճշտության համար ստորագրել են երեք տեսուչներ, որոնց իբր թե դրամարկղային կտրոն չի տրամադրվել:

Բացի վերը նշված ապատեղեկատվությունից, որը ներկայացրել են հարկային տեսուչները, հարկ է նշել նաև այն հանգամանքը, որ տվյալ հարկային տեսուչի կողմից առանց ծառայողական վկայական և ստուգման հանձնարարագիր ներկայացնելու, ՀԴՄ-ից դուրս է բերվել «Z» հաշվետվություն: Պետք է նշել նաև, որ Ա/Ձ Հասմիկ Թադևոսյանն իր գործունեությունը սկսել է ծավալել 2015թ.-ի փետրվար ամսվա կեսերից և մինչ հանձնարարագրի կազմման օրը ներկայացրել է ընդամենն առաջին եռամսյակին վերաբերող շրջանառության հարկի մեկ հաշվետվություն, որն էլ չէր կարող հիմք հանդիսանալ, որպեսզի Ա/Ձ-ն հայտնվեր դիսկային գոտում:

Վերը նշվածից պարզ է դառնում, որ չի կատարվել որևէ խախտում Ա/Ձ Հասմիկ Թադևոսյանի կողմից, հետևաբար Արաբկիրի հարկային տեսչության կողմից կազմված հանձնարարագիրը և ակտն անհիմն են:

**« Հինանաների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.**

« ՀՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ ՀՀ ՖՆ Արաբկիրի ՀՏ պետի 20.05.2015 թ-ի թիվ 6108178 հանձնարարագրի համաձայն Ա/Ձ Հասմիկ Թադևոսյանի մոտ իրականացվել է հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման ճշտության ստուգում: Այնուհետև, հիմք ընդունելով ստուգումն իրականացնող պաշտոնատար անձանց 21.05.2015 թ-ի զեկուցագիրը ՀՀ ՖՆ Արաբկիրի ՀՏ պետի 21.05.2015 թ-ի թիվ 109 հրամանով վերոգրյալ հանձնարարագրով իրականացվող ստուգման շրջանակներում ներառվել է նաև հսկիչ նշանների (դրոշմապիտակների) կիրառման ճշտության ստուգման տեսակը: Արդյունքում կազմվել է ՀՀ ՖՆ Արաբկիրի ՀՏ 19.06.2015 թ-ի թիվ 6108178 ակտը, որով լրացուցիչ գանձման է առաջադրվել 150.000 դրամ:

Ակտի 1-ին կետով մասնավորապես արձանագրվել է, որ հարկային տեսուչ Կ.Մարդոյանի կողմից Ա/Ձ Հասմիկ Թադևոսյանին պատկանող ք.Երևան, Երիտասարդական մետրո կայարան նախ. հասցեում գտնվող խանութից 21.05.2015թ. ժամը 17:20-ին կատարվել է գնամ 1350 դրամի չափով՝ 1 հատ աչքի մատիտ, 1 հատ եղունգի լաք, որի դիմաց վճարումը կատարվել է կանխիկ դրամով: Գումարը չի մուտքագրվել ՀԴՄ և համապատասխան գումարի ՀԴՄ կտրոն չի տրամադրվել: Ստուգումն անցկացնող հարկային ծառայողների կողմից ներկայացվել են ծառայողական վկայականները և ստուգման հանձնարարագիրը՝ ծանոթացման: Այնուհետև ժամը 17:23-ին ՀԴՄ-ից դուրս է բերվել «Z» հաշվետվություն 10900 դրամ (համակարգչի տեխնիկական անսարքության հետևանքով ակտի նախագծում Z» հաշվետվության մնացորդը նշվել է 100 դրամ) ընդհանուր գումարով, որում ներառված չի եղել կատարված վճարման արժեքը: «Z» հաշվետվությունը դուրս բերելուց հետո կատարված վճարման արժեքը՝ 1350 դրամը, ժամը 17:24-ին մուտքագրվել է ՀԴՄ, դուրս է բերվել կտրոն և ժամը 17:27-ին նորից դուրս է բերվել «Z» հաշվետվությունը՝ 1350 դրամ ընդհանուր գումարով: Ստուգմամբ պարզվել է, որ տնտեսավարող սուբյեկտի կողմից խախտվել են ՀՀ կառավարության 26.03.2015թ-ի թիվ 379-Ն որոշմամբ հաստատված ՀԴՄ շահագործման կանոնների պահանջները: Դեկավարվելով «ՀՀ-ում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի և «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի դրույթներով տնտեսավարող սուբյեկտին «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված կարգով առաջադրվել է տուգանք՝ 150.000 դրամի չափով:

Ա/Ձ Հասմիկ Թադևոսյանի ներկայացված գանգատում Ակտի իրավաչափությունը կասկածի տակ դնելու համար հիմք է ընդունվել այն հանգամանքը, որ Ակտի նախագծում գնումից հետո դուրս բերված Z հաշվետվության տվյալներով հասույթի մեծությունը նշվել է 100 դրամ, իսկ Ակտում՝ 10900 դրամ, ինչպես նաև, որ հարկային տեսուչի կողմից առանց ծառայողական վկայական և ստուգման հանձնարարագիր ներկայացնելու, ՀԴՄ-ից դուրս է բերվել «Z» հաշվետվություն:

Հանձնաժողովը գտնում է, որ գանգատում բերված վերոգրյալ փաստարկները, ըստ էության, չեն կարող հիմք հանդիսանալ ակտի իրավաչափությունը կասկածի տակ դնելու համար: Մասնավորապես, քննարկվող դեպքում Ակտի նախագծում և Ակտում Z հաշվետվության վերաբերյալ տվյալի տարբերությունը պայմանավորված է եղել համակարգչի տեխնիկական անսարքությամբ, ինչի մասին նշված է Ակտում: Բացի այդ, Ակտում մատնանշված Z հաշվետվության բոլոր տվյալները համընկնում են ստուգման ընթացքում ՀԴՄ-ից դուրս բերված Z հաշվետվության տվյալների հետ:

Ինչ վերաբերվում է գանգատում բերված հաջորդ պնդմանը, որ առանց ծառայողական վկայական և ստուգման հանձնարարագիր ներկայացնելու ՀԴՄ-ից դուրս է բերվել «Z» հաշվետվություն, ապա ստուգման իրականացնող պաշտոնատար անձինք պնդեցին, որ այն չի համապատասխանում իրականությանը:

Չնայած նրան, որ գանգատում Ակտի 2-րդ կետով արձանագրված խախտման վերաբերյալ առարկություն չի ներկայացվել, սակայն քննարկման ընթացքում անդրադարձ կատարվեց նաև այդ հարցին: Այսպես, Ակտի 2-րդ կետով մասնավորապես արձանագրվել է, որ 02.06.2015 թ-ին իրականացված հսկիչ նշանների (դրոշմապիտակների) կիրառման ճշտության ստուգմամբ պարզվել է, որ երկու հատ ԱՏԳԱԱ 3304 ծածկագրին դասվող ձեռքի կամ ոտքի մատնահարդարման միջոցների վրա՝ ընդհանուր գումարով 1600 դրամ, առկա չէին համապատասխան դրոշմապիտակներ: Արդյունքում արձանագրվել է «Առևտրի և ծառայությունների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ կետի և 9.2 հոդվածի պահանջների խախտման փաստ: Արձանագրված խախտումների վերաբերյալ կազմվել են համապատասխան արձանագրություններ:

Հանձնաժողովը, ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ եզրակացության, որ Ակտը կազմվել է ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

### ո Ր Ո Չ Ո Ս Մ Է՝

ՀՀ ՖՆ Արաբկիրի ՀՏ 19.06.2015 թ-ի թիվ 6108178 ակտը թողնել անփոփոխ, իսկ գանգատը՝ մերժել:

Սույն որոշմանը չհամաձայնվելու դեպքում այն ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան:

Հանձնաժողովի նախագահ՝

  
Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ

